ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կատարողական վարույթի մասին» 2024 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-179-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 3-րդ մասում «արգելանքները», իսկ 44-րդ հոդվածի 2-րդ մասում «(հաշվառում)» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ անշարժ գույքի, անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների կամ այդ իրավունքների նկատմամբ գրավի իրավունքի վրա դրվող արգելանքների» բառերը:

Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Սույն մասով սահմանված կարգավորումները չեն տարածվում անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացման դեպքերին, որոնց պարագայում հարկադիր կատարողը որոշումը Կառավարության սահմանած կարգով էլեկտրոնային եղանակով մուտքագրում է անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան:»,

2) 3-րդ մասերում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Սույն մասով սահմանված կարգավորումները չեն տարածվում անշարժ գույքի, անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների կամ այդ իրավունքների նկատմամբ գրավի իրավունքի վրա արգելանք կիրառելու դեպքերի վրա, որոնց պարագայում հարկադիր կատարողը որոշումը Կառավարության սահմանած կարգով էլեկտրոնային եղանակով մուտքագրում է անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան:»:

Հոդված 3. Օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասում «կողմից» բառից հետո «գույքի նկատմամբ կիրառված արգելանքը դադարեցվել և» բառերը հանել, իսկ «գրանցող մարմին սույն օրենքով սահմանված կարգով ուղարկում է» բառերը փոխարինել «Կառավարության սահմանած կարգով էլեկտրոնային եղանակով մուտքագրում է

անշարժ գույքի պետական ռեգիստրի էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան» բառերով:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2026թ., Երևան

ՀՕ - ... - Ն